Նախագիծ

Երկրորդ ընթերցում

Կ-232[57]-11.04.2022-ՊԻ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

«ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԲԺՇԿԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»

Հոդված 1. «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» 1996 թվականի մարտի 4-ի ՀՕ-42 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 11-րդ հոդվածի 5-րդ մասի 9-րդ կետում՝ «հետաքննության մարմնին (օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմնին),» բառերը հանել, իսկ «պատճառաբանված որոշման հիման վրա» բառերը փոխարինել «օրենքով սահմանված կարգով ներկայացված հարցումների հիման վրա» բառերով:

Հոդված 2. Օրենքի 28-րդ հոդվածի 1-ին մասի 14-րդ կետում «հետաքննության մարմնին (օպերատիվ-հետախուզական գործունեություն իրականացնող մարմնին),» բառերը հանել, իսկ «գրավոր հարցումների պատճառաբանված որոշումների հիման վրա» բառերը փոխարինել «օրենքով սահմանված կարգով ներկայացված հարցումների հիման վրա» բառերով:

Հոդված 3. Օրենքի 40-րդ հոդվածի 3-ին մասի 3-րդ կետում «հետաքննության մարմնի,» բառերը հանել:

Հոդված 4. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում «Հայաստանի Հանրապետության քրեական դատավարության օրենսգիրք» 2021 թվականի հունիսի 30-ի ՀՕ-306-Ն օրենքի ուժի մեջ մտնելու օրը: